Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039

հեռ☒՝ 010303010

mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1982

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

**«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԿ ՓԲԸ**

№ 21 05 փետրվար 2026թ.

# ՀՐԱՄԱՆ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՍԱԲԿ-ԷԱՃԱՊ ՁԲ- | 25 | խոզանակ ձեռքերի համար միանվագ | 1430000 | ՀԻՊՈԿ ՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ | 035845 01 | ՀՀ կոտայքի մարզ Ձորաղբյուր 2224 Ջրվեժ Այգետարածք 4/115 | 23.01.2026թ. | «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ | 1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.15 կետ (հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները) | * |

Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/15» ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի կողմից Կցված հավելված 1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացակայում է հավելված 1☒3-ը, անհրաժեշտ է շտկել հավելված 1-ը, 25-րդ չափաբաժնի համար նշել արտադրող ընկերության անվանում և շտկել տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 21.01.2026 թվականին ծանուցվել էր Մասնակցին հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» ՀՀ օրենքի

Գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 26.01.2026 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋՈՀՐԱԲՅԱՆ